ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2021թ. թիվ 139-Ա

ԱՇՈՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով mosoyannarine@yandex.ru էլեկտրոնային հասցեից ստացված դիմում-բողոքը և հաշվի առնելով Ա.Կյուրեղյանի 11.03.2021թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի մայիսի 5-ի թիվ 475 Ա/Ք հրամանով հաստատված «Ուսուցչի էթիկայի նորմերը» չպահպանելու՝ ուսուցչին հարիր բարձր լեզվական կուլտուրայի կանոնները խախտելու, ինչպես նաև առանց գործատուի հետ համաձայնեցման իր կողմից ղեկավարվող ՊՈԱԿ-ում քաղաքական ենթատեքստ պարունակող քննարկումներ և «Կանանց ասոցիացիա» ՀԿ-ի կողմից դպրոցի անձնակազմի և ծնողների հետ պարբերաբար քննարկումներ իրականացնելու համար «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Աշոտ Կյուրեղյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարողին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

3/11/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. մարտի 11
ք.Վանաձոր